

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան
Հաշվետվություն

ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարի
2012 թ. երկրորդ կիսամյակի գործունեության
վերաբերյալ

Հարգելի Արտամետցիներ, հարգարժան համայնքի ավագանու անդամներ և հյուրեր, ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից սահմանված կարգի համաձայն, այսօր ես Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր գյուղապետարանի կողմից 2012 թվականի երկրորդ կիսամյակում կայացած աշխատանքները ըստ գործունեության բնագավառների:

2012 թվականի սեպտեմբերի 9-ին տեղի ունեցավ համայնքի ղեկավարի և ավագանու ընտրություններ: Արտամետ համայնքի ղեկավար վերընտրվեց Անահիտ Եղիայի Դավթյանը:

Հաշվետվության ընդգրկված ժամանակաշրջանում՝ 2012 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում գումարվել է համայնքի ավագանու թվով 6 նիստ, որից 3 արտահերթ, որի արդյունքներով կայացվել է 8 որոշում, քննարկվել են ֆին. հարցեր:

Ֆինանսների բնագավառում.

2012 թվականի համայնքի բյուջեի երկրորդ կիսամյակի եկամտային և ծախսային մասերը:

ՀՀ օրենսդրության սահմանված կարգով 2012 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում տնօրինվել են համայնքի բյուջեի միջոցները և ապահովել դրանց նպատակային օգտագործումը: Օրենքով սահմանված կարգով որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն համայնքում կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումներ : տարեկան պլանով սահմանված՝

Հողի հարկ՝ 9000.0 հազ.դ --- 9013.2 հազ.դ

Գույքահարկ՝ 500.0 հազ.դ --- 509.3 հազ.դ

հողի վարձավճար՝ 370.0 հազ.դ --- 374.2 հազ.դ

գույքի վարձավճար՝ 2540.0 հազ.դ --- 2540.0 հազ.դ

Իսկ տարեսկզբի ազատ մնացորդը եղել է 230.8 հազ դրամ:

Պլանավորած համայնքի 2012 թվականի բյուջեն կատարվել է 100.4%

Սեփական եկամուտների մուտքերի ապահովման համար իմ կողմից գրավոր թողարկվել է բոլոր մեծ պարտքեր ունեցող հողի սեփականատերերին և վարձակալներին և ժամկետ է սահմանվել որպեսզի մինչև տարեվերջ մուծվի պլանով նախատեսված գումարը:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում.

Ինչպես ձեզ հայտնի է 2005 թվականից պայմանագրային սկզբունքով «Տեղաս» ՍՊԸ պայմանավորվել էր գյուղում բնական գազի անցկացման աշխատանքներ իրականացնել, որի համար համայնքային բյուջեից 52.0 միլիոն հի դրամ փոխանցվել է այդ նպատակի համար, բայց աշխատանքները չեն կատարվել:

Գազաֆիկացման աշխատանքները դադարեցվել են: Քրեական գործ է հարուցվել «ՏԵԴԱՍ» ՍՊԸ շինարարական կազմակերպության վրա: Քրեական գործը ընթացքի մեջ է:

Համայնքի հողային հաշվեկշռի համաձայն մեր համայնքում հաշվառված է 764.66 հեկտար վարելահող, 647.0 հեկտար բազմամյա տնկարկներ, որից պտուղ 402.11 հա, խղող 245.43 հա:

Հաշվետվության ժամանակաշրջանում հողի վերին բերքի շերտի տեղափոխման աշխատանքներ չեն կայացվել:

Գյուղապետարանի կողմից ղեկտեմբերի 1-ի դրությամբ հաշվառվել է ցանքատարածություններ ըստ մշակաբույսերի և ներկայացվել վիճակագրական ծառայություն:

Հողօգտագործման բնագավառ.

Հողերի արդյունավետ օգտագործման ու պահպանության խնդիրները լուծելու համար համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացրել հողօգտագործողների, հողի սեփականատերերի կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ: Վերահսկողություն է սահմանվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառմանը, հողային հաշվեկշռի կազմման, ներտնտեսային հողաշինարարական աշխատանքների իրականացման նկատմամբ:

Տրանսպորտի բնագավառ.

Համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներ ու շարժական մեխանիզմները օրենքով սահմանված կարգով, համայնքի ավագանու որոշմամբ, 1 տարի ժամկետով, վարձա-կալության պայմանագրով հանձնվել են «ՏԱԳ-ԳԱՏԷ» ՍՊԸ-ին:

Աշխատանքի և սոց ծառայության բնագավառ.

Հիշատակված բնագավառում համայնքի ղեկավարը աջակցել է նոր աշխատատեղերի ստեղծմանը, պայմաններ է ստեղծել համայնքի ազգաբնակչությանը աշխատանքի անցնել խոշոր հողատերերի մոտ, «Շենիկ» ԶՕԸ-ում, «ՏԱԳ-ԳԱՏԷ» ՍՊԸ-ում, գյուղապետարանի աշխատակազմում և դպրոցում:

2012 թվականի II կիսամյակում պայմանագիր է կնքվել «ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ», «Հայքրնոտկոյուղի» ՓԲԸ-ի և ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի միջև, հիմնական ակնկալվող արդյունքը Արմավիրի մարզի Արտամետ համայնքի խմելաջրի ներքին ցանցի ընթացիկ նորոգման աշխատանքներն են:

Գյուղատնտեսական բնագավառում.

ա) Համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված պետության կողմից պատվիրակված լիազորության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է և իր իրավասությունների սահմաններում, կազմակերպել է առկա անասնազխաքանակության հիվանդությունների կանխման, ինչպես նաև համաճարագային միջոցառումները և ագրոտային այլ կանոնների պահպանման աշխատանքները:

բ) Համայնքի ղեկավարի աջակցությամբ 2012 թվականի երկրորդ կիսամյակում Արմավիրի մարզպետարանի և ՀՀ Գյուղ.ևախարարության օգնությամբ ձեռք բերվեց դիզելային վառելանյութ և այն պայմանագրային կարգով բաժանվեց գյուղացիական տնտեսություններին:

Համայնքի ղեկավարը հաշվետվության ընկած ժամանակահատվածում աջակցություն է ցուցաբերում գյուղացիական տնտեսություն վարող ֆերմերներին՝ մարդկային ռեսուրսներով ապահովելու հարցում, որի արդյունում ստեղծվել է շուրջ 25 աշխատատեղ և միջին օրական աշխատավարձը կազմել է 5000 ՀՀ դրամ:

Գյուղապետարանը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում վիճ. հաշվետվություններ է ներկայացնում Բաղրամյանի Վիճ. Վարչություն:

Ժամանկին համայնքում կատարվում է աղբահանություն:

Հիմնախնդիրներ

1. Ներհամայնքային փողոցների կառուցում:

Համայնքի ղեկավար՝  Ա. Դավթյան

